ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԱԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 3 ՆԻՍՏԻ
(արտահերթ)

ք. Երևան **11.12.2019թ.**

Նիստին ներկա էին «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (Ինստիտուտ) հոգաբարձուների խորհրդի (Խորհուրդ) 24 անդամներից 22–ը:

Խորհրդի նիստը հեռարձակվում էր ուղիղ եթերով Ինստիտուտի ֆեյսբուքյան էջով:

Ապահովված էր նիստի քվորումը:

Նիստը վարում էր՝

Խորհրդի նախագահ Ռոման Մուրադյանը:

Նիստն արձանագրեց՝

Խորհրդի քարտուղար Դիանա Ալեքսանյանը:

Օրակարգ

1. 11.12.2019թ. Հոգաբարձուների խորհրդի թիվ 3 նիստի օրակարգի հաստատում:
2. Ինստիտուտի նոր կառուցվածքի քննարկում և հաստատում:
3. Ինստիտուտի վարչական աշխատակազմի հաստիքացուցակի քննարկում և հաստատում:
4. Հոգաբարձուների խորհրդի քարտուղարի հրաժարականի ընդունում և նոր քարտուղարի ընտրություն:
5. Այլ հարցեր:

Օրակարգի առաջին հարցով (զեկուցող՝ Խորհրդի նախագահ Ռոման Մուրադյան)

Խորհրդի նախագահ Ռ. Մուրադյանն առաջարկեց հաստատել նիստի օրակարգը:

Օրակարգի առաջին հարցը դրվեց քվեարկության: Առաջին հարցին կողմ քվեարկեց 19, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 0: Օրակարգն ընդունվեց:

Օրակարգի երկրորդ հարցով (զեկուցող՝ Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)

Դ. Խիթարյանը ներկայացրեց Խորհրդի հետ քննարկումների արդյունքում կազմված կառուցվածքը, ներկայացրեց Էռնեստ Ավանեսովի գրավոր դիտողություններն ու առաջարկությունները կառուցվածքի վերաբերյալ: Նիստին ելույթ ունեցավ նաև Խորհրդի անդամ Աննա Ստեփանյանը ներկայացնելով մասնագիտական կարծիք ներկայացված առաջարկությունների և դիտողությունների մի քանի կետերի վերաբերյալ:

Օրակարգի երկրորդ հարցը դրվեց քվեարկության: Երկրորդ հարցին կողմ քվեարկեց 17, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 2: Կառուցվածքն ընդունվեց:

Օրակարգի երրորդ հարցով (զեկուցող՝ Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)

Դ. Խիթարյանը ներկայացրեց Ինստիտուտի վարչական աշխատակազմի հաստիքացուցակը:

Օրակարգի երրորդ հարցը դրվեց քվեարկության: Երրորդ հարցին կողմ քվեարկեց 18, դեմ՝ 3, ձեռնպահ՝ 1: Վարչական աշխատակազմի հաստիքացուցակն ընդունվեց:

Օրակարգի չորրորդ հարցով (զեկուցող՝ Խորհրդի նախագահ Ռոման Մուրադյան)

1. Ռ. Մուրադյանը տեղեկացրեց, որ ստացել է հրաժարականի դիմում Խորհրդի քարտուղար Դ. Ալեքսանյանից:
2. Ելույթ ունեցավ Դ. Ալեքսանյանը, ներկայացրեց, որ աշխատանքային և ուսման ծանրաբեռնվածության պատճառով չի կարող կատարել Խորհրդի քարտուղարի պարտականությունները:
3. ***Օրակարգի չորրորդ հարցի առաջին մասը (հրաժարական) դրվեց քվեարկության և ընդունվեց միաձայն:***

Օրակարգի չորրորդ հարցի երկրորդ մասով՝ նոր քարտուղարի ընտրություն:

Խորհրդի անդամ Էռնեստ Ավանեսովը առաջարկեց խորհրդի անդամ ուսանող Հասմիկ Աղաբաբյանի թեկնածությունը՝ ուսանողության ակտիվ ներգրավվածության նպատակով:

Խորհրդի անդամ Դիանա Ալեքսանյանը առաջարկեց Խորհրդի անդամ Աննա Ստեփանյանի թեկնածությունը, միաժամանակ ներկայացնելով, որ աշխատող և սովորող ուսանողի համար ծանր է Խորհրդի քարտուղարի աշխատանքը:

Առաջարկվող թեկնածությունները դրվեց քվերակության

Հասմիկ Աղաբաբյանի օգտին քվերակեցին 8 կողմ, իսկ Ստեփանյան Աննայի օգտին՝ 13: Խորհրդի քարտուղար ընտրվեց Ստեփանյան Աննան:

Օրակարգի այլ հացերի մասով (զեկուցող՝ Ինստիտուտի ռեկտորի ժ/պ Դավիթ Խիթարյան)

Դ. Խիթարյանն առաջարկեց Խորհրդի նիստ գումարել 2020թ. հունվարի 17–ին օրակարգում ընդգրկելով 3 հարց՝ ռեկտորի գործունեության հաշվետվությունը, 2020թ. Ինստիտուտի բյուջեն և տարեկան ֆինանսական աուդիտ իրականացնող անձի ընտրությունը:

Խորհուրդն ընդունեց վերոնշյալ ժամկետում նիստ գումարելու առաջարկությունը:

Խորհրդի նախագահ ***Ռոման Մուրադյան***

Խորհրդի քարտուղար ***Դիանա Ալեքսանյան***